ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-280-10.06.2013-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Նախագծով, ըստ էության, առաջարկվում է ապրանքների՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման համար սահմանին հաշվարկվող ավելացված արժեքի հարկի վճարումը հետաձգել 90-օրյա ժամկետով, եթե բացթողումից հետո 90-օրյա ժամկետում ապրանքների նկատմամբ չի իրականացվել ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք:

Այս առումով, ներկայացված նախագիծն անընդունելի է հետևյալ հիմնավորումներով.

Ուսումնասիրելով վերջին երկու տարիներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե հավաքագրված եկամուտների կառուցվածքը՝ կարելի է նկատել, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում Հայաստանի Հանրապետության սահմանին հաշվարկված և գանձված ավելացված արժեքի հարկը մեծ տեսակարար կշիռ ունի: Մասնավորապես, 2011 թվականին այն կազմել է 207.3 մլրդ դրամ կամ

պետական եկամուտների 24.3 տոկոսը, 2012 թվականին՝ 231.4 մլրդ դրամ կամ պետական եկամուտների 23.4 տոկոսը: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանին հավաքագրված ավելացված արժեքի հարկի աճի միտումները՝ կարելի է հաշվարկել, որ այլ հավասար պայմաններում, 2013 թվականին Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանին հավաքագրման ենթակա ավելացված արժեքի հարկը կկազմի շուրջ 260.5 մլրդ դրամ կամ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների 24 տոկոսը: Այսինքն, ներկայացված նախագծի ընդունման դեպքում, կստացվի, որ պետական եկամուտների զգալի մասի՝ 260.5 մլրդ դրամի հավաքագրումը կհետաձգվի առնվազն մեկ եռամսյակով, ինչը Հայաստանի Հանրապետության հարկաբյուջետային հարաբերությունների ներկա պայմաններում անիրագործելի է:

Ապրանքների ներմուծման ժամանակ ավելացված արժեքի հարկի վճարման պարտավորության կատարման 90-օրյա ժամկետի սահմանումը չի կարող բարձրացնել տնտեսավարող սուբյեկտների շրջանառու միջոցների տնօրինման արդյունավետությունը՝ ինչպես ներկայացված է նախագծի ընդունման հիմնավորման մեջ, քանի որ նախագծով առաջարկվում է ոչ թե ազատել տնտեսավարող սուբյեկտներին ավելացված արժեքի հարկի վճարումից, այլ պարզապես հետաձգել ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետը:

Ներկայացված առաջարկը հակասում է «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածի կիրառության տրամաբանությանը, որով հարկի վճարման ժամկետի հետաձգում է նախատեսվում այն հարկ վճարողների համար, որոնք ապրանքներ են ներմուծում ներդրումային կամ արտադրական նպատակներով: Այդ հոդվածում առանձնացվել են գերազանցապես այնպիսի ապրանքներ (հոսքագծեր, հաստոցներ), որոնց ներդրման, կարգաբերման և արտադրանքի թողարկման համար պահանջվում է որոշակի ժամանակահատված: Սակայն ներկայացված առաջարկն արտոնյալ պայմաններ է ապահովում ապրանքների առևտրով զբաղվողների համար: Այլ կերպ ասած՝ եթե գործող օրենքը նախատեսում է ներդրումների խրախուսում, ապա նախագծով առաջարկվում է արտոնյալ պայմաններ ապահովել առևտրային գործունեության համար:

Էլեկտրոնային կառավարման համակարգերի զարգացմանը և հարկային ու մաքսային վարչարարության գործիքների կատարելագործմանը զուգահեռ պետք է ոչ թե հետաձգել ապրանքների ներմուծման մասով ավելացված արժեքի հարկի գանձման պահը, այլ աստիճանաբար վերանայել ավելացված արժեքի հարկի գանձման սկզբունքը՝ Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծումն ազատելով ավելացված արժեքի հարկից և հարկումն իրականացնելով հանրապետության ներքին տարածքում: Նշյալ փոփոխությունը, սակայն, կարող է իրականացվել միայն ապրանքների իրացման շղթայի նկատմամբ ամբողջական հսկողության համակարգի ստեղծման և պետական եկամուտների հավաքագրումը հետաձգելու ֆինանսավորման համար համապատասխան աղբյուրների առկայության դեպքում:

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների մասով մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ավելացված արժեքի հարկի գանձումը մաքսային սահմանից փուլ առ փուլ դեպի հանրապետության ներքին տարածք տեղափոխելու մոտեցումը համահունչ է այդ ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող քաղաքականության նպատակադրումներին, սակայն խնդիրը կայանում է նրանում, որ քաղաքականության այդպիսի փոփոխությունը ենթադրում է մեծ ֆիսկալ ազդեցություն պետական բյուջեի հարկային եկամուտների վրա: Այս առումով, խնդիրը կայանում է նրանում, որ պետք է նախապես գնահատվեն նման համակարգային փոփոխություն կատարելու հնարավորությունները, սահմանափակումներն ու եղանակները: Մինչ այդ, սակայն, Հայաստանի Հանրապետության կառավարությունը մտադիր է 2014 թվականի հունվարի 1-ից որոշակիորեն ազատականացնել Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների մասով մաքսային մարմինների կողմից հաշվարկվող և գանձվող ավելացված արժեքի հարկի գումարների հաշվին ձևավորվող դեբետային մնացորդների հետ ստացման ու օգտագործման հնարավորությունները, ինչը նաև ամրագրված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1865-Ն որոշմամբ հաստատված՝ հարկային օրենսդրության վերանայման 2012-2014 թվականների միջոցառումների ծրագրով: Այս առումով, գտնում ենք, որ նշյալ ծրագրով նախատեսված օրենսդրական փոփոխությունը

կատարելու պարագայում ներմուծման ժամանակ մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգման երկրորդ համակարգի ներդրման կարևորությունը կնվազի, քանի որ օրենսդրական փոփոխությամբ կընդլայնվեն ներմուծման ժամանակ մաքսային մարմիններին վճարված ավելացված արժեքի հարկի գումարների հետ վերադարձման հնարավորությունները:

Նախագծի ընդունումը խնդրահարույց է նաև դրա կիրառության տեսանկյունից, քանի որ այն էլ ավելի կբարդեցնի ավելացված արժեքի հարկով հարկման համակարգը: Գործնականում, ապրանքների ներմուծման օրվան հաջորդող 90-օրյա ժամկետում կարող է իրացվել ներմուծված ապրանքների մի մասը, ինչը նշանակում է, որ այս դեպքում յուրաքանչյուր ներմուծման մասով հարկ վճարողի կողմից պետք է վարվի լրացուցիչ հաշվառում, լրացուցիչ անգամ հարկ վճարողը պետք է դիմի մաքսային մարմին, կատարի հաշվարկներ և մասնակի վճարումներ:

Նմանատիպ հաշվառում վարելու և ընդհանրապես օրենքի կիրառության հետ կապված հիմնախնդիրներ առաջանում են նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածի 2-րդ կետի կիրառման հետ կապված, ինչը հարկ վճարողի և հարկային մարմնի համար հիմնախնդիրներ է առաջացրել պարտավորությունների հաշվառման, փաստաթղթերի (դիմումների, ծանուցումների) ներկայացման, անձնական հաշվի քարտերի վարման առումով: Նախագծի ընդունումը կնշանակի մի քանի անգամ մեծացնել հիմնախնդիրների առաջացման դեպքերի թիվը:

Նախագծում կիրառված են որոշ մոտեցումներ ու հասկացություններ, որոնք տարընթերցումների պատճառ կարող են դառնալ:

Մասնավորապես, կարծում ենք, որ կարիք չկա նախագծով սահմանելու, որ ներմուծված ապրանքների համար օրենքի 6-րդ հոդվածով սահմանված հարկվող գործարքներից առաջացող ավելացված արժեքի հարկի գումարը ենթակա է վճարման, քանի որ անմիջականորեն 6-րդ հոդվածով այդ գործարքները համարվել են ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ, և օրենքի այլ դրույթներից բխում է, որ այդ գործարքների համար պետք է հաշ-

վարկվի և վճարվի ավելացված արժեքի հարկ:

Բացի դրանից, օրենքի 6-րդ հոդվածով սահմանված՝ հարկվող գործարքների ցանկում է նաև ապրանքների ներմուծումը, ուստի անհամապատասխանություն է առաջանում օրենքի նախագծի 2-րդ հոդվածի առաջին նախադասության առաջին և երկրորդ մասերի միջև:

Մյուս կողմից, հստակեցման կարիք ունի «ապրանքների մասով հարկվող գործարք տեղի չունենալ» արտահայտությունը և այն հարցը, թե արդյոք ներմուծված 100 միավոր ապրանքներից մեկի օտարումը պետք է նշանակի, որ ներմուծված ողջ 100 միավորի մասով տեղի է ունեցել հարկվող գործարք:

Միաժամանակ, հայտնում ենք, որ նախագծում մասամբ պահպանված չեն օրենսդրական տեխնիկայի կանոնները:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը:

Նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

**«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**««Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

««Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի

«Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

## ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**<<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման**

**1. <<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:**

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***դրական ազդեցություն***:

Նախագծով նախատեսվում է ապահովել սահմանի վրա ԱԱՀ-ի հաշվարկման, իսկ

հետագայում՝ դրա հարկագանձման առավել արդարացի և տնտեսապես հիմնավորված մեխանիզմ՝ վերացնելով ՀՀ ներքին տարածք ներմուծվող ապրանքներից ԱԱՀ-ի գանձումը սահմանի վրա իրականացնելու պահանջը, ինչը կնպաստի տնտեսվարող սուբյեկտների համար ֆինանսական ծախսերի նվազեցմանը:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**
**«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) փոփոխության են ենթարկվում ԱԱՀ-ի վճարման և հաշվարկների ներկայացման կարգը և ժամկետները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

**Եզրակացություն**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է ապրանքների՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման համար սահմանին հաշվարկվող ավելացված արժեքի հարկի վճարման 10-օրյա ժամկետը փոխարինել 90-օրյա ժամկետով, եթե բացթողումից հետո 90-օրյա ժամկետում ապրանքների նկատմամբ չի իրականացվել ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք:

Հայաստանի Հանրապետության սահմանին հաշվարկված և գանձված ավելացված արժեքի հարկը 2012 թվականին կազմել է 231.4 մլրդ. դրամ կամ պետական եկամուտների 23.4 տոկոսը: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանին հավաքագրված ավելացված արժեքի հարկի աճի միտումները՝ կանխատեսվում է, որ այլ հավասար պայմաններում, 2013 թվականին Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանին հավաքագրման ենթակա ավելացված արժեքի հարկը կկազմի շուրջ 260.5 մլրդ. դրամ կամ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների 24 տոկոսը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ ապրանքների բացթողումից հետո

ավելացված արժեքի հարկի հավաքագրման վարչարարական խնդիրներով պայմանավորված՝ ներմուծված ապրանքների համար մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի հավաքագրումը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է լինել պակաս արդյունավետ, քան Հայաստանի Հանրապետության սահմանին՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կարող է լինել բացասական:

Միաժամանակ, հայտնում ենք, որ նախագծի թե ընդունման, թե չընդունման ազդեցությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն: